«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 11 - 2

15 հունիսի 2020 թվականի (հարցման կարգով)

Առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության մեխանիզմների կազմակերպման կարգերում ժամանակավոր փոփոխություններ կատարելու մասին

2020 թվականի մարտի 16-ին Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության տեղաշարժման սահմանափակումներով և ՀՊՏՀ ուսանողների ուսումնառության իրավունքների լիարժեք իրացման անհրաժեշտությունով պայմանավորված՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

Արտակարգ դրության գործողության ընթացքում «Առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և առկա ուսուցման մագիստրատուրայի ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության մեխանիզմների կազմակերպման կարգերում» կատարել հետևյալ ժամանակավոր փոփոխությունները.

1. 2019-2020 ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակի համար սահմանված ուսման վարձը չվճարած ուսանողներին չթույլատրել 2020 թվականի հունիսի 15-ից սկսվող գիտելիքի ստուգման երկրորդ դասընթացի քննությանը:

2. Հանձնարարել ֆակուլտետների դեկաններին՝ ums.asue.am հարթակում պարտք ունեցող ուսանողների դիմաց կատարել համապատասխան նշումներ՝ փակելով գնահատական նշանակելու հնարավորությունը:

3. Ուսման վարձի պարտքի պատճառով քննության չթույլատրված ուսանողների քննությանը չմասնակցելու հանգամանքը «ոչ հարգելի» չներկայացած լինելու հիմքով վերահանձնում չհամարել և նմանատիպ ուսանողների համար կիրառել «հարգելի չներկայացած» կարգավիճակ:

4. Ուսման վարձը չվճարելու պատճառով «հարգելի չներկայացած» կարգավիճակ ստացած ուսանողների համար սահմանել գիտելիքի ստուգման լրացուցիչ ժամանակահատված՝ 22.06.2020 - 26.06.2020, և նրանց գիտելիքի ստուգման արդյունքները հաշվառել ՄՈԳ-ի հաշվարկման ընթացքում՝ ուսանողներին չզրկելով փոխատեղմանը մասնակցելու և ուսման վարձի՝

ուսանողական նպաստի ձևով մասնակի փոխհատուցում (զեղչ) ստանալու իրավունքից:

5. 2020 թվականի հունիսի 27-ին գիտական խորհրդին զեկուցել ուսման վարձի հավաքման արդյունքների մասին՝ նոր որոշում կայացնելու համար:

6. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Գրիգորյանին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ռեկտորի պաշտոնակատար՝ **Դ. Գալոյան**

2020 թ. հունիսի 15

Երևան